ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3/5.1.1-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2024թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 5.1 միջոցառման «Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առցանց նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ. Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար

Լ.Պետրոսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Շ.Հովսեփյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2024 թվականի մայիսի 29-ին կայացած նիստի որոշման 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ:

Նշվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման «Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման իրականացման նպատակով հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ն, ընդունել է առաջարկվող փոփոխությունները՝

• մասնավորապես՝ նախահաշվում առանձին տողով նշվել է ԱԱՀ վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև հստակեցվել են ֆինանսական առաջարկի որոշ տողեր՝ համապատասխանեցնելով սույն մրցույթի հրավերի 2.4.1 կետի պահանջներին (այդ թվում՝ գինեգործարանների, տրանսպորտային ծառայությունների նկատմամբ պահանջների հստակեցում և այլն):

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Կնքել համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման «Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ

համագործակցության շրջանակներում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հաղթող ճանաչված «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի հետ 151.000.000 (հարյուր հիսունմեկ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) -

Ա.Մկրտչյան -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Հ.Սահակյան -

Ա.Սողբաթյան -

Լ.Պետրոսյան -

Շ.Հովսեփյան -